բնորոշ ներկայացուցիչներն են Ագուլիսն ու Մեղրին։ Այս ազդեցությունը նկատվում է նաև ավելի հյուսիս՝ Շամախիում, նույնիսկ արդեն Լեռնային Ղարաբաղի սահմաններում՝ Հադրութում։ Դեպի հարավ զոկական հատկանիշները ուժեղանում են Ողջիի (Օխչիի) հովտում, Զանգեզուրի (Արեգունու-Մեղրու-Գյունեյի) լեռնաշղթայի երկու կողմերում և հաղթող են հանդիսանում բուն Արաքսի ափերին՝ Կարճևան-Մեղրի-Շիվանիձոր՝ այժմ Շվանիձոր ավաններում։ Այս ճյուղը կառուցված է բոլորովին առանձնահատուկ քերականական մտածողության վրա, որը արտահայտվում է վաղակատար-ներկա-վաղակատար, անցյալ վաղակատար, ապառնի վաղակատար ժամանակների կազմվելովը մի առանձին մասնիկ բառի- նիս, լալ, լալէ, նէլ և այլն հավելումով հիմնական ժամանակների վրա[23]։ «Այսպիսի հատկություն չկա մեր ոչ մի այլ բարբառի մեջ»,—ասում է պրոֆ. Ա. Ղարիբյանը և ոչ մի հնդեվրոպական լեզվախմբի որևէ անդամի մեջ՝ կավելացնեմ ես։ Այս իրողությունը թելադրում է եզրափակել, որ զոկական գավառներում էթնոգենեզին մասնակցել է մի այլ ազգագրական տարր, որը բացակայում է Հայաստանի այլ մասերում։ Պե՞տք է արդյոք այդ տարրը կապել եկվոր սակ ցեղերի հետ, ինչպես հակված է կարծելու պրոֆ. Ա. Ղարիբյանը, թե՞ մի այլ բացատրություն պիտի որոնել՝ այս խնդիրը առայժմ թողնում եմ առկախ, մինչև լրացուցիչ նյութերի հավաքելը։ Այժմ այդտեղ միայն պետք է ընդգծել այն փաստը, որ Զանգեզուրի բնակչության կազմի մեջ բացի զուտ ղարաբաղյան հնդեվրոպական տարրից մտել է հնդեվրոպականից տարբեր էթնիկ տարրը, որը կարող էր կամ նրա հետ դրսից եկած լինել, կամ նրա այստեղ երևալուց առաջ արդեն տեղում գոյացած, գուցե հենց աղվանական շերտի հետ սերտորեն շաղկապված, մի շերտի, որի լեզվական առանձնահատկությունների մասին շատ քիչ (գուցե և գրեթե ոչ մի) անվիճելի և հաստատ բան գիտենք։

Վերջին դեպքում գործ կունենանք մի այսպիսի երևույթի հետ— որ աղվանական նախնական էթնիկ շերտը, ենթարկվելով հնդեվրոպական ժողովուրդների հեղեղի ներխուժման՝ պատվել, ջլատվել, կորցրել է իր համատարածությունն ու միասնությունը, որ նրա հյուսիսային հատվածներից կտրվել, անջատվել են հարավային հատվածները, որոնք պահպանվել են գլխավորապես Ալանգյազ լեռնաշղթայի և նրանից դեպի հարավ-արևմուտք և հարավ-արևելք ձգվող լեռնաբազուկների միջև զետեղված փակ հովիտների մեջ, նաև փակ Ղարադաղում և նրանից դեպի Ուրմիո լիճը ձգվող գետահովիտներում։

Հաջորդ նկարագրության մեջ երևան կգա մի այլ զուգահեռ երևույթ՝ Զանգեզուրի հյուսիսային և հարավային մասերի խոսվածքների տարբերության հետ նաև ազգագրական տարբերությունը, որն ամենից շատ արտահայտվում է տների կառուցվածքների և կանացի զգեստների մեջ։

Ո՞ր կողմով է ներթափանցել Զանգեզուրի երկրորդ էթնիկ տարրը, այժմյան ղարաբաղախոս հայ տարրը, որի լեզվի բառերի և քերականական ձևերի մեծ մասը հնդեվրոպական է։ Վաղուց է, որ քննելով թե՛ Հերոդոտի հաղորդած տեղեկությունները, թե՛ բևեռագիր արձանագրությունների մեջ պահպանված վկայությունները և թե՛ հնագիտական և ազգագրական տվյալները՝ ես եկել եմ

---

[23] Այս բարբառային երևույթի մասին հատկապես խոսք կլինի Մեղրի-Ագուլիսի զոկական ազգագրական երևույթներին նվիրվելիք հետազոտությանս մեջ։ Մնաց անկատար (Ծան. խմբ.)։